ԱՐՓԵՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հոդվածում առանձնացվել և ուսումնասիրվել են ՀՀ ժողովրդագրական իրավիճակի գնահատման ցուցանիշները և դրանց վրա ազդող հիմնական գործոնները: Փաստացի վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքում գնահատվել է ժողովրդագրական իրավիճակի շարժընթացը, և հաշվարկներով ցույց են տրվել այն կորուստները, որոնք ՀՀ տնտեսությունն ունեցել է ժողովրդագրական ցուցանիշների բացասական շարժընթացի հետևանքով:

Հիմնաբառեր. *ժողովրդագրական, գնահատական, զբաղվածներ, շարժընթաց, ամուսնություն, ամուսնալուծություն, բնակչություն*
JEL: J11, E00

Վերջին տասնամյակներում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող մի շարք տնտեսական և քաղաքական գործընթացների հետևանքով անցանկալի փոփոխություններ գրանցվեցին մեր երկրի ժողովրդագրական իրավիճակում: Այսօր արդեն Հայաստանը դասվում է ծերացած բնակչություն ունեցող պետությունների շարքին: ՄԱԿ-ի սահմանման համաձայն՝ ծերացած է համարվում այն երկրի բնակչությունը, որտեղ 65 և բարձր տարիք ունեցողների թվաքանակը գերազանցում է ընդհանուր բնակչության 7%-ը: Հայաստանում այդ ցուցանիշը շուրջ 11,6% է (2018 թ. տվյալներով ՀՀ-ում 65 և բարձր տարիք ունեցող մշտական բնակչության թվաքանակը 344,7 հազար է[1]): Այս առումով, մեր կարծիքով, որոշակի տարակարծություն և անհամա-

[1] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2018, էջ 45:

պատասխանություն գոյություն ունի «ծերացած բնակչություն» հասկացության տնտեսագիտական գնահատման հարցում: Այս մեկնաբանության ընթացքում կարևոր է հիշել, որ աշխատանքի շուկայի ուսումնասիրման տեսանկյունից աշխատունակ է համարվում 15-75 տարեկան բնակչությունը[2], հետևաբար, եթե գնահատենք 75-ից բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը ընդհանուր բնակչության մեջ, ապա ՀՀ-ում, 2018 թ. տվյալներով, այն կազմում է ընդամենը 5,4% (160,8 հազար մարդ[3]): Վերոնշյալ տվյալները վկայում են, որ չափանիշների մեծության փոփոխությունը կարող է փոխել նաև գնահատականների խստությունը: Այդուհանդերձ, որոշակի սահմաններում կարելի է ընդունել միջազգային տարբեր զեկույցների այն գնահատականը, որ Հայաստանը կանգնած է ժողովրդագրական ճգնաժամի շեմին:

Տարբեր միջազգային կազմակերպությունների կանխատեսումներով երկրագնդի բնակչությունը տեսանելի ապագայում՝ 2030 թ., աճելու է շուրջ 1.2 միլիարդով և կազմելու է շուրջ 8.3 մլրդ[104], մինչդեռ ՀՀ բնակչությունը նվազելու է: ՄԱԿ-ի կանխատեսումներով՝ ՀՀ մշտական բնակչությունը կրճատման հետևանքով 2050 թ. կազմելու է 2.8 մլն, իսկ 2100 թ.՝ 2,3 մլն[5]:

Անշուշտ, ամեն մի երկրի ժողովրդագրական պատկերի վրա ազդում են մի շարք գործոններ, այդ թվում՝ ծնելիության, մահացության, ամուսնության և ամուսնալուծության, միգրացիայի ցուցանիշները, բնական աղետները, պատերազմական իրավիճակը, երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական դրությունը և այլն: Նշված գրեթե բոլոր ցուցանիշների գծով Հայաստանում վիճակն անհանգստացնող է: 2010-2018 թթ. ընթացքում Հայաստանի բնակչության թվաքանակը կրճատվել է 82,5 հազարով, ընդ որում միգրացիայի մնացորդի և բնակչության ընդհանուր հավելաճի ցուցանիշները 1992 թվականից մշտապես եղել են բացասական (թեև 2012 թ. զգալի դրական տեղաշարժ է գրանցվել. 2011-ի համեմատ միգրացիայի բացասական մնացորդը կրճատվել է 19,1 հազար մարդով, այդուհանդերձ, հետագա տարիներին ևս մնացել է բացասական), իսկ 2013-2017 թթ. միգրացիայի բացասական մնացորդը տատանվել է 21,8-ից 25,9 հազար մարդու սահմաններում: 2018 թ. ՀՀ-ում գրանցվել է որոշ դրական տեղաշարժ, որի արդյունքում միգրացիայի բացասական մնացորդը, նախորդ տարվա համեմատ, կրճատվել է 5,5 հազարով՝ կազմելով՝ 18,5 հազար մարդ (տե՛ս գծապատկեր 1):

Ցանկացած երկրում ժողովրդագրական ճգնաժամը հանգեցնում է աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակի կրճատման, ինչը լուրջ մարտահրավեր է ապագայում աշխատուժի պահպանման, դրա հետագա աճի համար և բացասաբար է ազդում տնտեսական աճի տեմպերի վրա: Նույնիսկ ՄԱԿ-ի լավատեսական կանխատեսումների համաձայն՝ ժողովրդագրական իրավիճակի փոփոխությունների տեմպերի պահպանման պայմաններում, 2050 թ. Հայաստանի բնակչության շուրջ 40%-ը լինելու են տարեցներ:

---

[2] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018, էջ 52:

[3] Հաշվարկները կատարել է հեղինակը՝ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2018, էջ 45-ի տվյալների հիման վրա:

[4] http://eurasian-defence.ru/sites/default/files/DS/Documents/global-trends-2030-rus.pdf

[5] Տե՛ս United Nations, Department af Economic and Social Affairs, Population Division (2011). World Population Prospects: The 2010 Revision. Volum I: ST/ESA/SER.A/313, էջ 85:



Գծապատկեր 1. Միգրացիայի մնացորդը ՀՀ-ում 2010-2018 թթ. (հազ.մարդ)[6]

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյանի ներկայացմամբ՝ «եթե 1990 թ. Հայաստանում 11 հոգի աշխատում էր, որպեսզի [պետությունը] 1 հոգի չաշխատող պահեր, 2010 թ. 6 հոգի էր աշխատում՝ 1 հոգի պահելու համար, ապա 2050 թ. 1,6 հոգին պետք է պահի 1 հոգու: Այսինքն՝ սոցիալ-տնտեսական բեռը, որը նստելու է պետության և բնակչության ուսերին, մոտ տասն անգամ ավելանալու է»[7]: Ժողովրդագրական փաստացի տվյալները վկայում են, որ ՀՀ-ում բնակչության թվաքանակի կրճատումն առավելապես ազդել է աշխատունակ տարիքի բնակչության վրա: Այսպես, 2011-2018 թթ. ՀՀ աշխատունակ տարիքի բնակչության թվաքանակը կրճատվել է 112,7 հազարով, մինչդեռ աշխատունակ տարիքից ցածր և աշխատունակ տարիքից բարձր բնակչության թվաքանակն աճել է համապատասխանաբար 23,7 և 42,8 հազար մարդով[8]: ՀՀ-ում ժողովրդագրական ճգնաժամի կարևոր պատճառներից է բնակչության վերարտադրության ցածր ցուցանիշը: Վերարտադրության համար յուրաքանչյուր կին միջինում պետք է ունենա 2,1 երեխա, մինչդեռ Հայաստանում այս ցուցանիշը կազմում է 1,6:

Ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը կարող է նպաստել ամուսնությունների թվի աճը և ամուսնալուծությունների թվի կրճատումը, սակայն վերջին տարիներին այս ցուցանիշները ևս անցանկալի միտում են գրանցել: Այսպես, Հայաստանի անկախացումից հետո ամուսնությունների ամենաբարձր մակարդակը (22955 ամուսնություն) գրանցվել է 1992 թ., այնուհետև այն զգալիորեն կրճատվել է և 2000 թ. հասել է նվազագույն՝ 10986 մակարդակի: Թեև հետագա տարիներին ամուսնությունների մակարդակն աստիճանաբար աճել է, սակայն այլևս երբևէ չի հասել 1992 թ. մակար-

[6] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2018, էջ 39, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ., հունվար-դեկտեմբերին, էջ 141:
[7] https://ampop.am/demographic-crisis-in-armenia/
[8] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2018, էջ 46:

դակին (2011 թ. այս ցուցանիշը գրանցել է անկախության տարիների հաջորդ ամենաբարձր մակարդակը՝ 19706, որից հետո այն շարունակաբար նվազել է և 2018 թ. հասել 14822-ի): Ընդհանուր առմամբ, 2011-2018 թթ. ՀՀ-ում ամուսնությունների քանակը նվազել է 4884-ով կամ 24,8%-ով, իսկ ամուսնալուծություններն աճել են 631-ով կամ 19,8%-ով: Հետխորհրդային ողջ ժամանակահատվածում ՀՀ-ում ամուսնալուծությունների ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2014 թ. (4496 ամուսնալուծություն)՝ հետագա տարիներին դրսևորելով որոշ կրճատման միտում, սակայն 2017-2018 թթ. դարձյալ որոշ չափով ավելացել է՝ կազմելով համապատասխանաբար 3 940 և 3819 ամուսնալուծություն[9]:

ՀՀ-ում անհանգստացնող ժողովրդագրական խնդիր է նաև սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը: Անկախությունից ի վեր Հայաստանում անցանկալի միտումներ են նկատվում նորածինների սեռերի հարաբերակցության հարցում. 113 տղա՝ յուրաքանչյուր 100 աղջկա հաշվով: Մինչդեռ, ըստ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի և Հայաստանի առողջապահության նախարարության գնահատականների, բնականոն է 102-106 տղա՝ 100 աղջկա դիմաց հարաբերակցությունը: Ժողովրդագրության տեսանկյունից նման երևույթի շարունակականության դեպքում Հայաստանը մինչև 2060 թվականը կկորցնի ավելի քան 90 հազար կին կամ ապագա մայր, ինչը բացասաբար կազդի ընտանիք կազմելու հնարավորության վրա, որով իսկ կնպաստի նաև հետագա արտագաղթին:

1980-ական թթ. Հայաստանում գրանցված ծնելիության բարձր ցուցանիշին հաջորդեցին անկման տարիները: Ընդ որում, շարունակական անկումը գագաթնակետին հասավ 2001 թ., երբ, 1990-ի համեմատ, ծնունդները կրճատվեցին շուրջ 2,5 անգամ (1990 թ. 79882 նորածնի փոխարեն 2001 թ. ծնվել է ընդամենը 32065-ը)[10]: Հաջորդ տարիներին թեև որոշ դրական տեղաշարժեր նկատվեցին, սակայն, 1990 թ. համեմատ, ծնունդների ընդհանուր թիվը 2018-ին 2,2 անգամ պակաս էր (36 502 ծնունդ)[11]:

2016-2018 թթ. Ազգային ծրագիրը[12] նախատեսում էր ժողովրդագրական խնդիրների հաղթահարման երկու հիմնական բաղադրիչ՝ սոցիալ-տնտեսական խրախուսում և առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության աճ: Այդուհանդերձ, 2018 թ., 2016-ի համեմատ, ծնելիությունը նվազել է ավելի քան 10%-ով և կազմել է 36.5 հազ. երեխա[13]: Բերված թվերը վկայում են, որ միանվագ նպաստները և օգնությունները, որոնք այժմ կիրառվում են ՀՀ-ում, ըստ էության, դերակատարում չունեն ծնելիության մակարդակի բարձրացման գործում: ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ավագ փորձագետ Ռալֆ Հաքերտը կարծում է, որ Հայաստանում ցածր ծնելիության հիմնական պատճառները գործազրկությունն ու արտագաղթն են: Իսկ ծնելիությունը խթանելու համար, ըստ նրա, «պետք է պետության մշտական ուշադրությունը, այլ ոչ թե՝ միանվագ նպաստները և օգնությունը»:

---

[9] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2008, էջ 99, 2018, էջ 113, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ., հունվար-դեկտեմբեր, էջ 141:

[10] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2002, էջ 20, 2008, էջ 57:

[11] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2018, էջ 64, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ., հունվար-դեկտեմբեր, էջ 141:

[12] https://armenia.unfpa.org/hy/news/

[13] Տե՛ս Հայաստանի սոցիալական վիճակը 2017 թ., էջ 366:

Այսօր արդեն, սոցիալական ոլորտը կարգավորող մարմինները, ժողովրդագրական իրավիճակի հնարավորինս բարելավման նպատակով, երկրորդ երեխայի համար տրվող միանվագ նպաստը կտրուկ ավելացրել են երեք անգամ՝ հասցնելով 150 հազար դրամի[14]: Մեր կարծիքով՝ նման միջոցառում պետք է նախատեսել նաև առաջին երեխայի համար, քանի որ ՀՀ-ում երիտասարդության մի զգալի մասի հնարավորություններն այնքան սուղ են, որ նույնիսկ չեն համարձակվում ամուսնանալ, ինչ մնաց թե մտածեն երեխա ունենալու մասին: Այս տեսակետից կարելի է մտածել նաև երիտասարդների ամուսնությունները խրախուսելու որոշակի ծրագրերի մասին:

Ակնկալվում էր, որ առողջապահության ոլորտի ժամանակակից ձեռքբերումների արդյունքում դրական տեղաշարժեր կարող էին գրանցվել մահացության ցուցանիշների շարժընթացում: Սակայն փաստացի վիճակագրական տվյալները վկայում են, որ այս հարցում ևս ՀՀ տվյալները խիստ մտահոգիչ են: Այսպես, եթե 2000-ական թթ. ՀՀ-ում մահացության ցուցանիշը տատանվում էր 25-27 հազարի շրջանակում, ապա 2013 թվականից այն աստիճանաբար աճել է և 2013 թ. 27196 մահվան դեպքի փոխարեն 2016-ին գրանցվել է 28226-ը: Այնուամենայնիվ, 2017-2018 թթ. այդ թիվը որոշ չափով կրճատվել է՝ համապատասխանաբար կազմելով 27157 և 25645[15]:

Աղյուսակ 1

Զբաղվածների և ՀՆԱ-ի շարժընթացը ՀՀ-ում 2012-2017 թթ.[16]

	2012	2013	2014	2015	2016	2017	2017թ.՝ 2012-ի համեմատ (%)
Զբաղվածներ (հազ.մարդ)	1172,8	1163,8	1133,5	1072,6	1006,2	1 011.7	86,3
ՀՆԱ (մլրդ դրամ)	4266,5	4555,6	4828,6	5043,6	5079,86	5 568,9	130,5
ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	10619,4	11121,3	11609,5	10553,3	10572,3	11536.5	108,6
ՀՆԱ-ն մեկ զբաղվածի հաշվով (հազ.դրամ)	3637,9	3914,41	4259,9	4702,2	5048,6	5504,5	151,3
ՀՆԱ-ն մեկ զբաղվածի հաշվով (ԱՄՆ դոլար)	9054,7	9556,0	10242,2	9839,0	10507,2	11403,1	125,9
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (հազ.դրամ)	1410,8	1507,5	1602,2	1678,6	1697,6	1873,3	132,8
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	3511,6	3680,1	3852,1	3512,0	3533,0	3880,8	110,5

Ընդհանուր առմամբ, նման անցանկալի շարժընթացը ևս բարդացնում է առանց այն էլ դժվարին ժողովրդագրական իրավիճակը: Վերջինիս բարելավման նպատակով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն գործոններին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են ժողովրդագրական գործընթացների վրա: Այդ գործոններից հատկապես կարևորվում են.

---

[14] Տե՛ս «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» որոշման մեջ փոփոխություններ, https://www.aravot.am/2018/09/06/979193/:

[15] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2017, էջ 91, 2018, էջ 85:

[16] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016-ի, 2017-ի և 2018-ի տվյալների հիման վրա:

- բնակչության եկամուտները,
- բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը,
- միգրացիան,
- առողջապահական և կրթական ծառայությունների մատչելիությունը:

Արդեն իսկ նշել ենք, որ ժողովրդագրական ցուցանիշների բացասական շարժընթացն ազդում է տնտեսական աճի վրա (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակից երևում է, որ ՀՀ-ում ժողովրդագրական իրավիճակի բացասական շարժընթացի հետևանքով (բնակչության թվաքանակը 2012-2017 թթ. զգալիորեն կրճատվել է) կրճատվել է զբաղվածների ընդհանուր թվաքանակը՝ 161,1 հազար մարդ: Ընդ որում, դիտարկվող ժամանակահատվածում այդ կրճատումը կրել է շարունակական բնույթ՝ ամենաբարձր մակարդակը գրանցելով 2014-2016 թթ. ընթացքում: Զբաղվածների թվաքանակի կրճատումը, այլ հավասար պայմաններում, ենթադրում է ՀՆԱ-ի թողարկման ծավալների հարաբերական կրճատում: Մեր կարծիքով՝ զբաղվածների թվաքանակի կրճատումը 2012-2016 թթ. ընթացքում իր որոշակի ազդեցությունն է ունեցել (թեև 2017 թ. բնակչության թվաքանակը կրճատվել է, սակայն զբաղվածներինը որոշ չափով աճել է), դոլարային արտահայտությամբ, ՀՆԱ-ի ծավալի 0,4% կրճատման վրա: Եթե փորձենք գնահատել, թե զբաղվածության մակարդակի պահպանման դեպքում (2012 թ. դրությամբ), այլ հավասար պայմաններում, որքան լրացուցիչ ՀՆԱ կարտադրվեր 2017 թ., եթե աշխատանքի արդյունավետությունը գնահատենք 2012-2017 թթ. ձևավորված միջին մակարդակով, ապա կստանանք բավականին մտահոգիչ ցուցանիշ: Այսպես, լրացուցիչ 161,1 հազար զբաղվածների թվաքանակը բազմապատկելով մեկ զբաղվածի հաշվով թողարկման միջին ծավալով, որի հաշվարկային մեծությունը 4472,6 հազ. դրամ է, կստանանք 720,5 մլրդ դրամ: Սա նշանակում է, որ ժողովրդագրական գործոնի ազդեցությամբ ՀՀ-ում 2017 թ., այլ հավասար պայմաններում, միջին հաշվով 720,5 մլրդ դրամի ՀՆԱ պակաս է արտադրվել:

Իհարկե, անվերապահորեն չի կարելի ասել, որ վերոնշյալ հաշվարկները բացարձակ ճշգրիտ են, քանի որ տնտեսության տարբեր ոլորտներում աշխատանքի արդյունավետության մակարդակները տարբեր են, իսկ դրանց փոփոխությունների, այդ թվում՝ տնտեսության կառուցվածքային փոփոխությունների ազդեցության հաշվարկը պահանջում է մեծածավալ տեղեկատվություն: Սակայն կարող ենք հավաստիորեն գնահատել, որ դիտարկվող ժամանակահատվածում (2012-2017 թթ.) զբաղվածների աշխատանքի արտադրողականությունն էական աճ է գրանցել (151,3%) այն դեպքում, երբ մեկ բնակչի հաշվով ՀՆԱ-ն աճել է 132,8%-ով: Այդուհանդերձ, նման ենթադրությունները, ընդհանուր առմամբ, իրատեսական են նաև այն պատճառով, որ աշխատանքի արտադրողականության աճի տեմպի ժամանակագրական շարքը ստացիոնար է, քանի որ ցնցումներից հետո այն ձգտում է վերադառնալ իր երկարաժամկետ միջին արժեքին:

Զբաղվածների թվաքանակի կրճատման պատճառով ՀՆԱ-ի ծավալների հարաբերական կրճատումը ենթադրում է նաև պետության հարկային եկամուտների կրճատում, ինչի հետևանքով, վերջին հաշվով, տուժում է սոցիալական ոլորտը, քանի որ բնակչության կենսամակարդակի բարձրացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների գերակշիռ մասը տրամադրվում է պետական բյուջեից, իսկ վերջինիս եկամուտների մեծությունն առավելապես պայմանավորված է հարկային եկամուտներով:

Վերջին տասնամյակներում ՀՀ ժողովրդագրական իրավիճակի շարունակական վատթարացումը լուրջ մարտահրավեր է հատկապես ազգային անվտանգության հարցում, ինչը հրամայաբար պահանջում է ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային հայեցակարգի մշակում և կիրարկում:

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2002:
2. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2017:
3. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2018:
4. Հայաստանի սոցիալական վիճակը 2017 թ.:
5. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018:
6. «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» որոշման մեջ փոփոխություններ, https://www.aravot.am/2018/09/06/979193/:
7. http://eurasian-defence.ru/sites/default/files/DS/Documents/global-trends-2030-rus.pdf
8. United Nations, Department af Economic and Social Affairs, Population Division (2011).
9. World Population Prospects: The 2010 Revision. Volum I: ST/ESA/SER.A/313
10. https://ampop.am/demographic-crisis-in-armenia/
11. https://armenia.unfpa.org/hy/news/

АРПЕНИК МУРАДЯН
Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук

Изменения в демографической ситуации РА и возможные последствия.– В статье изложены и проанализированы показатели оценки демографической ситуации и основные факторы, влияющие на нее. В результате анализа фактических статистических данных мы оценили демографическую ситуацию и конкретными расчетами показали те потери, которые экономика Армении имела в результате отрицательной динамики демографических показателей.

Ключевые слова: *демография, оценка, занятость, мобильность, брак, развод, население.*
JEL: J11, E00

ARPENIK MURADYAN
Associate Professor at the Chair of
Macroeconomics at ASUE, PhD in Economics

Changes in the Demographic Situation in Armenia and their Possible Consequences.– The paper outlined and examined the demographic situation assessment indicators and the main factors affecting it. As a result of the study of the actual statistical data, we assessed the demographic situation and by concrete calculations we have shown the losses which Armenian economy had as a result of a negative impact of demographic indicators.

Key words: *demographics, assessment, employment, mobility, marriage, divorce, population.*
JEL: J11, E00